

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1990 թվականի հոկտեմբերի 20-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Վեհարանում, Ամենայն Հայոց Հայրապետի նախագահության ներքո, տեղի ունեցավ Սուրբ Գրոց Հայկական Ընկերության հիմնադրման հանդիսավոր արարողություն:

Արարողությանը ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ՝ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը, Տ. Գարեգին եպիսկոպոս Ներսիսյանը, պրոֆ. Հակոբ Փափազյանը, պրոֆ. Պիոն Հակոբյանը, ինչպես նաև Միացյալ Աստվածաշնչական Ընկերությունների Եվրոպայի և Մերձավոր Արևելքի շրջանային քարտուղար Վերապատվելի դոկտ. Հանս Ֆլորինը, նույն Ընկերության Ավստրալիայի ներկայացուցիչ Ուայնե Մարշալը և Սուրբ Գրոց թարգմանական գործերի պատասխանատու Վերապատվելի դոկտ. Մանուել Ճինպաշյանը:

Այս առթիվ Միացյալ Աստվածաշնչական Ընկերությունների և նորահաստատ հայկական Աստվածաշնչական Ընկերության միջև կնքվեց համագործակցության պայմանագիր: Պայմանագիրն ստորագրեցին Հայկական Աստվածաշնչական Ընկերության կողմից՝ Մայր Աթոռի Դիվանապետ Գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը և Գերագույն Հոգևոր Խորհրդի քարտուղար Պարգև Շահբազյանը, իսկ Միացյալ Աստվածաշնչական Ընկերությունների կողմից՝ Վերապատվելի դոկտ. դոկտ. Հանս Ֆլորինը և Մանուել Ճինպաշյանը:

Արարողության վերջում Ամենայն Հայոց Հայրապետը ողջունեց և օրհնեց սույն նախաձեռնությունը՝ մաղթելով, Հայաստանում և Հայ Սփյուռքում, հետագա հաջողություններ Աստուծո խոսքի սպասավորության և տարածման գործում:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
22 հոկտեմբեր 1990 թ.